ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 15—17 օրերին Մայր Աթոռում տեղի ունեցավ ներքին թեմերի խորհրդակցական հանդիպում, որին մասնակցում էին.

1. **Մայր Աթոռից՝** Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը, Մուշեղ վրդ. Պետիկյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Հովհ. Թոփուզյանը, Վերստուգիչ հանձնաժողովի անդամներ Եփրեմ Ալեքսանյանը, Գր. Գյուլլանը, Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ Գառնիկ Քեհյայանը, տնտեսական բաժնի վարիչ Անդրանիկ Ուլուջյանը, Մայր Աթոռի դիվանապետ Հայկ Առաքելյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը և միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Պ. Շահբազյանը:

2. **Արարատյան թեմից՝** առաջնորդական փոխանորդ տ. Վահան եպս. Տերյանը, թեմական ու եկեղեցական խորհուրդների անդամներ՝ Վարդան Սամվելյանը (ս. Սարգիս եկեղեցի), Գևորգ Համալյանը (ս. Հովհաննես եկեղեցի), Խաչիկ Կուզուբաշյանը (ս. Զորավար եկեղեցի), Պանդուխտ Մանուկյանը՝ գլխավոր հաշվապահ:

3. **Շիրակի թեմից՝** թեմական առաջնորդ տ. Մաշտոց եպս. Թաջիրյանը, Հովհաննես Ալեքսանյանը (Լենինական), Նազարեթ Սեֆեյանը (Կիրովական) և հաշվապահ Մովսես Անթափյանը (Լենինական):

4. **Վրաստանի թեմից՝** թեմական առաջնորդ տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը, թեմական և եկեղեցական խորհուրդների անդամները՝ Սուրեն Ավչյանը, Սամվել Իսախանյանը, Խաչիկ Հեքեքյանը և հաշվապահ Գևորգ Դուրգարյանը:

5. **Ադրբեջանի թեմից՝** թեմական առաջնորդ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, թեմական և եկեղեցական խորհուրդների անդամները՝ Հրանդ Պետրոսյանը (Բաքու), Արշակ Պետրոսյանը (Կիրովաբադ) և հաշվապահ Նիկոլա Աթաջանյանը:

6. **Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի թեմից՝** տ. Գրիգոր քհն. Տերտերյանը (Զալտոր գյուղի հոգևոր հովիվ), Պայծառ Թորոսյանը (Արմավիր), Գևորգ Գևորգյանը (Մոսկվա), Հ. Փիլիպպոսյանը (Օրջոնիկիձե) և հաշվապահ Լ. Վարդանյանը (Օրջոնիկիձե):



Ներքին թեմերի խորհրդակցաժողովի խորհրդակցող

7. **Գեղարդի վանահայրությունից՝** վանահայր տ. Նարեկ վրդ. Շաքարյանը, տնտեսվար Արա Բաստրմաջյանը:

Փետրվարի 15-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 9-ին, վերոհիշյալ բոլոր պատգամավորները ժամանում են Մայր Աթոռ և, Իջման ս. սեղանի առաջ իրենց ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, ժամը 13-ին, թեմական սրբազանների առաջնորդությամբ, թեմ առ թեմ ներկայանում Վեհափառ Հայրապետին՝ Նրա ս. Աջը համբուրելու և օրհնությունը ստանալու:

Ժամը 13.30-ին դիվանատանը տեղի է ունենում ներքին թեմերի խորհրդակցական ժողովը:

Երեկոյան թեմական առաջնորդներն ու պատգամավորները Մայր տաճարում ներկա են լինում ս. Ղևոնդյանց քահանաների Նախատոնակին և ժամը 20-ին Վեհարանում դիտում են 1969 թվականի մեռոնօրհնության, ինչպես նաև՝ Վեհափառ Հայրապետի Հռոմ այցելության ֆիլմերը:

Փետրվարի 16-ին, երեքշաբթի օրը, առավոտյան, բոլոր պատգամավորները Մայր տաճարում ներկա են լինում պատարագի՝ ս. Ղևոնդյանց քահանայից տոնի առիթով:

Այնուհետև, ժամը 11-ին, շարունակվում է թեմերի խորհրդակցական ժողովը:

Երեկոյան ժամը 19-ին պատգամավորները Երևանում, Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում, դիտում են «Ֆիլումենա Մարտուրանո» պիեսի բեմադրությունը:

Փետրվարի 17-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել Վեհարանում բոլոր հոգևորական և աշխարհական պատգամավորներին:

Լուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոսը Վեհափառ Հայրապետին է ներկայացնում թեմական առաջնորդներին և թեմական ներկայացուցիչներին՝ հայցելով Նորին Սրբության օրհնությունը:

Վեհափառ Հայրապետը ողջունում է թեմական առաջնորդներին և պատգամավորներին, բարի գալուստ է մաղթում և ներկայացնում Մայր Աթոռի ապագայի գործունեության ծրագիրը՝ շեշտելով անհրաժեշտությունը ներքին եկեղեցական կյանքի է՛լ ավելի կազմակերպումի, մեր եկեղեցիների բարեզարթումի:

Վեհափառ Հայրապետը Իր ծրագրային ճառի մեջ կանգ է առնում նաև ներկայիս մեր ազգային-եկեղեցական կյանքի հետ կապված մի շարք կարևոր հարցերի վրա:

Ժամը 15-ին Վեհարանում պատգամավորների պատվին տրվում է ճաշկերույթ, որին ներկա են լինում նաև Գերագույն հոգևոր խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, դիվանապետը, «Էջմիածին» ամսագրի խմբագիրը, միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչը, ֆինանսական և տնտեսական բաժնի վարիչները՝ շուրջ 40 հոգի:

Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը:

Ընդունելության ժամանակ տ. Հայկազուն արքեպիսկոպոսը առաջին բաժակը առաջարկում է խմել Վեհափառ Հայրապետի կենաց, որի անվանակոչության տոնն է հաջորդ օրը, հինգշաբթի, Վարդանանց տոնին:

Ջերմ շնորհավորական ու հայրենասիրական ելույթներ են ունենում տ. Կոմիտաս, տ. Հուսիկ, տ. Վահան եպիսկոպոսները, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Օննիկ Թոփուզյանը, Նարեկ վարդապետը, թեմական անդամներ Սամվել Վարդանյանը (Երևան), Նիկոլա Աթաջանյանը (Բաքու), Սուրեն Ավչյանը (Թբիլիսի), տ. Գրիգոր քհն. Տերտերյանը (Զալտոր-Հյուսիսային Կովկաս) և ապա «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը:

Ժամը 17-ին բոլոր պատգամավորները աջահամբույրով հրաժեշտ են առնում Վեհափառ Հայրապետից և մեկնում իրենց թեմերը:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետը պատգամավորներին նվիրում է «Հայկական եկեղեցիներ» այբոմ՝ որպես վարձատրություն նրանց եկեղեցաշեն և հայրենանվեր գործունեության: